

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

05-ը մայիսի 2018թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

- 1. Ամբիոնի վարիչների հաշվետվություն:**
- 2. Ուսումնական խորհրդատուի հաշվետվություն:**
/զեկ. Մ. Ա. Ճաղարյան/
- 3. Ընդունելության համապատասխանություն աշխատաշուկային:**
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
- 4. 2017-18թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի նախապատրաստում և գրաֆիկի հաստատում:**
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
- 5. 2018-2022թ.թ. ուսումնական պլանների քննարկում և հաստատում:**
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի գիտխորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին Մ. Ա. Զաքարյանը զեկուցման համար ձայնը տվեց „Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության, ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Յուցույանին:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Յուցույանը: Նա ներկայացրեց ամբիոնում կատարված աշխատանքները, որոնք ըստ հաստատված ժամանակացույցի իրականացվել է. ժամանակին կազմվել և տրվել են ուսանողներին ընթացիկ քննությունների հարցաշարերը: Կազմակերպվել և անց են կացվել I կիսամյակի ընթացիկ ստուգումներն ու քննությունները:

Ժամանակին և պատշաճ անց է կացվել I կիսամյակի քննաշրջանը: Ուսումնական պրոցեսը կազմակերպվել է դասացուցակի հիման վրա, դասապրոցեսի խաթարում, դասաժամերի բաց թողում չի եղել: Այժմ նախապատրաստական աշխատանքներ է տարվում II ընթացիկ ստուգումների, քննությունների, ավարտական աշխատանքների պաշտպանության և II կիսամյակի քննաշրջանի կազմակերպման համար: Նա ներկայացրեց, որ ամբիոնը դեկանատի հետ համատեղ իրականացրել և իրականացնում են ուսումնական գործընթացին համապատասխան արդյունավետ աշխատանք: Հաճախակի կազմակերպվում են ուսանողների զեկույց-ընթերցումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ. Ս. Գասպարյանը, Գ. Վ. Գուլակյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացվածին և առաջարկեցին ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել „բավարար,,:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի կատարած աշխատանքները գնահատել „բավարար,,:

Այնուհետև խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ձայնը տալիս է Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի Ժ/պ Ա. Ս. Հովակիմյանին:

Ա. Ս. Հովակիմյանը ներկայացրեց ամբիոնում իրականացված աշխատանքները կապված ուսումնական պրոցեսի հետ: Նա ևս ներկայացրեց, որ ժամանակին տրվել են ուսանողներին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների հարցաշարերը: Կազմակերպվել և անց են կացվել քննությունները: Քննաշրջանի արդյունքներով ակադեմիական պարտք ունեցող ուսանող չի գրանցվել: Ուսումնական պարապմունքները անց են կացվում դասացուցակի հիման վրա, դասաժամերի բացթողում չի եղել: Այնուհետև ամբիոնի վարիչը հայտնեց, որ դեկանատի հետ համատեղ աշխատանքը տալիս է իր դրական արդյունքը հաճախումների և ուսումնառության համակարգում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Ս. Սիմոնյանը, Ք. Վ. Օթարյանը, Հ. Ս. Գասպարյանը և ուրիշներ: Նրանք ներկայացրին ամբիոնի ներդրումը ուսումնական պրոցեսում և մասնագիտության կայացման գործում՝ առաջարկեցին ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել „բավարար,,:

Այնուհետև ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ներկայացրեց, որ չպետք է սահմանափակվել ձեռք բերածով և առաջարկեց ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը զեկուցման համար ձայնը տվեց ֆակուլտետի ուսումնական խորհրդատու Մ. Ա. Ճաղարյանին:

Նա ներկայացրեց, որ իրականացվում է ուսանողների հաճախումների վերահսկողություն, դասաժամերի իրականացման, ուսումնական պրոցեսի հետ կապված բոլոր աշխատանքները: Կան ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներ, որոնց հետ ամբիոնը կամ տվյալ առարկայի դասախոսը կատարում է անհատական աշխատանք: Ուսման բարձր առաջադիմություն ապահովելու համար ուսանողների աշխատանքի համեմատական արդյունավետության բարձրացումն է, որ անհրաժեշտություն է ուսման բարձր որակի և առաջադիմության ապահովման համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ. Ս. Գասպարյանը, Գ. Վ. Գուլակյանը: Նրանք նշեցին, որ դեկանատի և ամբիոնների հետ համատեղ ուսումնական խորհրդատուն կատարում է իրեն պարտականությունները և առաջարկեցին նրա կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ֆակուլտետի ուսումնական խորհրդատու Մ. Ա. Ճաղարյանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Նա ներկայացրեց, որ բազմիցս քննարկվել է ընդունելությունը աշխատաշուկային համապատասխան կազմակերպելու անհրաժեշտությունը. Նորացվել են մասնագիտությունները՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:

Օրակարգի երրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ներկայացրեց 2017-18 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը, որը կազմվել է համապատասխան ուսումնական պլանի:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2017-18 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

Օրակարգի հինգերորդ հարցի մասին Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց 2018-22 տարվա ուսումնական պլանը, որը կազմվել է „Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/ մասնագիտության համար:

Քննարկումից հետո որոշեցին հաստատել 2018-22 թթ. ուսումնական պլանները

ՆԱԽԱԳԱՀ

Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ